

## ՀՀ Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանին

**20 նոյեմբերի, 2013թ.  
AA/68**

Հարգելի պարոն Նալբանդյան,

«Մեդիա կենտրոն» բանավեճային ակումբը նախատեսում է պատրաստել ինֆոգրաֆիկա 1988թ. ավերիչ երկրաշարժի 25-րդ տարելիցին ընդառաջ:

Ինֆոգրաֆիկան ներառելու է քանակական տվյալներ՝ աղետի գոտում ծնելիության և մահացության, ինչպես նաև երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների վերաբերյալ:

Ուստի, խնդրում եմ տրամադրել հետևյալ տեղեկատվությունը.

1. 1989թ.-ից մինչև 2013 թ.-ը քանի մարդ է ծնվել և մահացել Լոռու մարզի՝ երկրաշարժից տուժած քաղաքներում ու գյուղերում՝ ըստ տարիների:
2. 1988թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժի հետևանքով Լոռու մարզում քանի՞ ընտանիք (այդ թվում քանի՞ անհատ) է դարձել անօթևան: Խնդրում եմ անօթևան դարձած ընտանիքների թիվը նշել՝ ըստ աղետի գոտու բնակավայրերի (քաղաքներ, գյուղեր):
3. Երկրաշարժի հետևանքով Լոռու մարզում անօթևան մնացած քանի՞ ընտանիքի (այդ թվում քանի՞ անհատի) է Հայաստանի Հանրապետությունն ապահովել բնակարանով մինչև 2013թ. նոյեմբերի 1-ը: Խնդրում եմ բնակարանով ապահովված ընտանիքների թիվը նշել՝ ըստ աղետի գոտու բնակավայրերի (քաղաքներ, գյուղեր) և բնակարան տրամադրելու տարեթվերի:

4. 2013թ. նոյեմբերի 1-ի դրությամբ երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած քանի՞ ընտանիք (այդ թվում քանի՞ անհատ) կա Լոռու մարզում: Խնդրում եմ դեռևս անօթևան ընտանիքների թիվը նշել՝ ըստ աղետի գոտու բնակավայրերի (քաղաքներ, գյուղեր):
5. Ե՞րբ է նախատեսվում երկրաշարժի հետևանքով՝ Լոռու մարզի դեռևս անօթևան այդ ընտանիքներին ապահովել բնակարանով: Խնդրում եմ նշել՝ ըստ բնակավայրերի (քաղաքներ, գյուղեր) և բնակարանով ապահովելու նախատեսվող տարեթվերի:

«Մեդիա կենտրոնի» պատրաստած ինֆորաֆիկաները հրապարակում են մի շարք լրատվամիջոցներ:

Կանխավ շնորհակալ եմ համագործակցության և աջակցության համար:

Հարգանքով՝

Աղավնի Եղիազարյան

**«Մեդիա կենտրոնի» համակարգող**

Հավելյալ տեղեկությունների համար խնդրում ենք զանգահարել «Մեդիա կենտրոն» (+374 60) 505 898, (+374 99) 755 898: Էլ փոստ՝ [mediacenter@mynews.am](mailto:mediacenter@mynews.am):

**«Մեդիա կենտրոնի» մասին**

*«Մեդիա կենտրոնը» նոր հարթակ է՝ կոչված մեկտեղելու Հայաստանի քաղաքացիական հասարակության և լրատվական դաշտի ներուժը:*

*«Մեդիա կենտրոնի» հիմնական առաքելությունն է երկխոսությունների, քննարկումների ու բանավեճերի խթանումը քաղաքացիական խմբերի փորձագետների, քաղաքական գործիչների և լրատվամիջոցների միջև, Հայաստանում բանավեճերի մշակույթի հիմնումը, ինչպես նաև հաղորդակցության արդյունավետ ուղիների ստեղծումը քաղաքացիական նախաձեռնությունների, հասարակական կառույցների և առաջատար լրատվամիջոցների միջև:*

*«Մեդիա կենտրոնը» համակարգում է «Հանրային լրագրության ակումբը»՝ Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի և Հայաստանում Մեծ Բրիտանիայի դեսպանատան համատեղ աջակցությամբ:*